ՀՊՏՀ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի ելույթը ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջում Անկախության 25-ամյակին նվիրված միջոցառմանը

Հարգելի ներկաներ, սիրելի ուսանողներ

Այս օրերին մենք բոլորս տոգորված ենք հայրենասիրության վառ զգացումներով, քանի որ նշում ենք մեր պետության անկախության 25-ամյակը: 1991թ. համաժողովրդական հանրաքվեով ընդունվեց մեր երկրի անկախության հռչակագիրը՝ հաստատելով մեր ժողովրդի վաղեմի երազանքը՝ ապրել ազատ և անկախ երկրում:

Անցած 25 տարիները մեզ համար պետականաշինության, երկրի շենացման, շատ արժեքների և գաղափարների վերաարժևորման ժամանակաշրջան էր: Մենք ցանկանում էինք կերտել այն բաղձալի երկիրը, որտեղ ապրելը արժանավայել կլիներ:

Անկախությունը, իր բոլոր դժվարություններով հանդերձ, մեզ առաջադրեց բոլորովին նոր իրողություններ, որոնցով ապրեցինք ոչ միայն մենք, այլև մի նոր սերունդ՝ անկախության սերունդը: Այն պայծառ է, լուսավոր, ինքնահաստատ և լավատես: Որպես կրթության գործի կազմակերպիչ՝ ես հիացմունք եմ ապրում՝ տեսնելով, թե ինչ խելացի և օժտված է ներկա սերունդը, որքան իղձեր ունի, որքան նախաձեռնող է իր ապագայի կառուցման գործում: Սա այն սերունդն է, որն իրապես կրում է ազատ և անկախ ապրելու գաղափարը, որը ոչ պակաս հայրենասեր է, քան այն սերունդը, որի շնորհիվ Արցախյան ազատամարտում մենք նվաճեցինք փայլուն հաղթանակ: Ասածիս վառ ապացույցը ապրիլյան քառօրյա պատերազմն է, որն ապացուցեց հայ զինվորի բազկի ուժը, մեր երիտասարդների անսահման հայրենասիրությունն ու անկոտրում կամքը: Մենք քաջալերվում և նոր լիցքեր ենք սնանում անկախության սերնդի

նորօրյա ձեռքբերումներից:

Սիրելի ներկաներ

Վստահ եմ, որ այս տարիներին բոլորս էլ հանդիպել ենք դժվարությունների, սակայն պետք է լցվենք այն գիտակցումով, որ կերտում ենք անկախ պետություն, որը դեռ կայացման ծանր ճանապարհին է: Շնորհավորում եմ բոլորիս այս հրաշալի տոնի կապակցությամբ. քառորդդարյա այս շրջանը թող դառնա մեր բոլորի իղձերի իրականացման, մեր երկրի, մեր հայրենիքի շենացման, խաղաղ արարման ճանապարհ:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ և մաղթում նորանոր ձեռքբերումներ՝ մեր պետությանը, և յուրաքանչյուրիդ անհատապես:

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ